04101191

Հայաստանի Հանրապետություն
Արարատի մարզ
Վարդաշատի գյուղապետարան
№ _____
«20» 12 2017 թ.

Արարատի մարզպետ
Պարոն՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կից գրությամբ ուղարկվում է
Վարդաշատ համայնքի ավագանու
Թիվ 7- արձանագրությունը:

Հարգանքով՝

Վարդաշատի գյուղապետ Ա.Կարապետյան

20.12.2017թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7 գ.Վարդաշատ

ՎԱՐԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ №7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Տեղի ունեցավ Վարդաշատ համայնքի ավագանու №7 հերթական նիստը:Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար Ա. Կարապետյանը ,քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Խ. Ասատրյան:Նիստին մասնակցում էին ավագանու բոլոր հինգ անդամները: Մասնակցում էր նաև առաջատար մասնագետ Խ. Ասատրյանը:

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Վարդաշատ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Կարապետյան)

1. Լսեցին - - Զեկուցող Ա . Կարապետյանը նշեց,որ ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի,տեղական տուրքը համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների դիմաց օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:
Արտահայտվեցին – Լ. Զոհրաբյանը,Վ. Հակոբյանը

ՈՐՈՇԵՑԻՆ –

Ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների,Վարդաշատ համայնքում 2015թ. համար տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանել.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 ից 5000 դրամ.

բդ. 3001 ևավելիքառակուսի մետրի համար 100000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) պակաս 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝	1500 դրամ
2) ծխախոտի արտադրանքի՝վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝	1500 դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար

350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

100000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար 500 000 դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

«ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական վճար ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա յուրաքանչյուր մեքենայի համար 10 հազար դրամ:

Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով Վարդաշատ համայնքում հաշվարկել 0.3 գործակցի կիրառմամբ:

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը կոսկոսող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց տեղական տուրքը սահմանել 1500 դրամ

Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց՝ 1000 դրամ

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ 1500 դրամ:

աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են համայնքի ավագանու կողմից:

Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել ստորև ներկայացվող Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և տարբեր դրույքաչափեր՝ հաշվի առնելով աղբի գոյացման վայրի (անշարժ գույքի) նպատակային կամ գործառնական նշանակությունը:

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

2. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50- դրամ,

3. առևտրի հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ,

4. հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ,

5. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 դրամ.

ե. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 5 դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

/ստորագրություն/ Լ. Զոհրաբյան

/ստորագրություն/ Խ. Ասատրյան

/ստորագրություն/ Վ. Հակոբյան

/ստորագրություն/ Հ. Գևորգյան

ԴԵՄ՝ ՉԿԱ ՁԵՌՆՊԱՀ՝ ՉԿԱ

ՎԱՐԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ԵՏՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ [illegible]ՍՏՅԱՆ